որպէս ասացեալ եմք։ Վերին և ստորին 7 կամարս Ս. Կուսին կոչեցեալ։ Իսկ Լատինք յետ բազմադիմի վիճմանց և դատաստանաց, ոչ միայն չառին յանձն տալ զնոսա 'ի ձեռս Յունաց, այլ նաեւ բողոք կալան 'ի Կոստադինուպոլիս առ դեսպանն Վենետկոյ՝ յայտ արարեալ զվէճս և ըգխնդիրս Յունաց, և նորա անյապաղ ծանուցեալ 'ի Դուռն՝ էառ նաեւ ինքն հրովարտակ վասն Լատինաց, ընդ նմին և զերկուս պաշտօնեայս, և առաքեաց յԵրուսաղէմ։

Ի հառանիլ հրովարտակին և արանցն, կազմեցաւ ժողով մեծ 'ի դատարանի, ուր էին Պատրիարքն Յունաց և փոխանորդն Լատինաց հանդերձ միաբանօք, ընթերցաւ հրովարտակն՝ և եղեւ վէճ բազում և դատաստանական քննութիւն, սակայն Յոյնք ոչ կարացին մատուցանել մուրհակս 'ի հաստատութիւն բանից իւրեանց զոր յառաջ բերէին։ Իսկ Լատինք մատուցին յատենին զրազմաթիւ գրեանս և օրինօք հաստատեցին զիրաւունս այրին և զերկոց գրանց և բանալեաց նոցին։ Ապա եռուն բառնալ անտի զկանթեղս եւ զաշտանակս, զորս եդին Յոյնք, և վերստին յետս առին զմի բանալի գրան այրին, յետ մնալոյ 'ի ձեռս նոցա ամիսս 7. և 'ի դատաստանի անդ վերստին հաստատեցաւ մնալ 'ի ձեռս Լատինաց ըստ առաջնոյն՝ այրն գրունքն և բանալիք նոցին՝ ՌԽՂ (1632)։ Եւ 'ի սոյն դատաստանի մատուցին Լատինք զգիր դատաւորին Երուսաղէմի գրեալ 'ի թուականի ՉՎՓ (1565)։ Յորում ընթերցան զընդդիմութիւնս Գերմանոսի Յոյն Պատրիարքի սակս այրին Ծնընդեան. զի 'ի նմին ժամանակի բերեալ էր և նա հրովարտակ յԱրքայէ՝ և կամէր լինիլ բաժանորդ այրին. և 'ի լինել դատաստանի՝ ոչ կարաց չահել ինչ. թէպէտ և պընդէր թէ զայրն Ծննդեան չինեալ իցէ թագուհին Հելինէ մայր Կոստանդիանոսի յազգէ Յունաց. այլ Լատինք մերժեցին յայնժամ զբանս նորա, թէ նոքա էին յազգէ Լատինաց և Հռոմայեցի. եւ յերկարիլ դատաստանին՝ մերժեցաւ Գերմանոս, և հաստատուն կացին Լատինք 'ի տեղիս իւրեանց։ Յետ այսր քննութեան և դատաստանի վերստին մերժեցան Յոյնք յատենէ, և թէոփանէ չչահեալ ինչ՝ վերստին դիմեաց 'ի Դուռն Արքայի. և 'ի նոյն ամի էառ դարձեալ հրովարտակ, ՌԽԳ (1634). յորում խըս-